Տաթևիկ Հայրապետյան, Ներքաղաքական գործընթացները Ադրբեջանում 1988-1998 թվականներին, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 178 էջ

Պատմական գիտությունների թեկնածու Տաթևիկ Հայրապետյանի աշխատությունը նվիրված է Ադրբեջանի Հանրապետությունում 1988-1998 թթ. տեղի ունեցած քաղաքական գործընթացների, ներքին փոխհարաբերությունների, արտաքին քաղաքական ազդեցությունների և դրանց հետևանքների ուսումնասիրությանը:

Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին խորհրդային շատ հանրապետություններում տեղի ունեցան հախուռն և անորոշությամբ լի քաղաքական գործընթացներ: 1988 թ. արդեն նկատելի էին անշրջելի փոփոխությունները, որոնց հետևանքով ԽՍՀՄ-ը փլուզվեց և ձևավորվեցին նորանկախ պետություններ: Ադրբեջանում քաղաքական ավանդույթների և մշակույթի բացակայության պատճառով անկախացման գործընթացը զուգորդվեց ներիշխանական դաժան պայքարով, բռնություններով և երբեմն նույնիսկ հակապետական բանսարկությունների բազմազանությամբ: Հասարակությունը ադրբեջանական ինքնությունը միանշանակ չէր ընկալում: Ի դեպ, նրա հատվածայնացումը նորանկախ պետության համար մեծ վտանգ էր պարունակում, ուստի այն նվազեցնելու լավ միջոց էր հակահայկականության՝ իբրև համախմբման հիմնական գաղափարական հիմքի ընտրությունը: Հակահայկականությունը, որն այսօր ևս արդեն ամուր արմատներ է ձգել Ադրբեջանի պետական ու հանրային կյանքում, դեռևս մնում է հասարակության ընդհանրության ապահովման գլխավոր չափանիշը:

1988-1998 թթ. Ադրբեջանում ներիշխանական պայքարի և դրա բովում Արցախյան ճակատում տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանմանը նվիրված Տաթևիկ Հայրապետյանի սույն աշխատությունը հիմնված է սկզբնաղբյուրների և փաստական հարուստ նյութի վրա: Գրքի առաջին գլխում հեղինակը ներկայացնում է ԽՍՀՄ փլուզման տարիներին Ադրբեջանում ազգայնական ինքնության վերածնունդը՝ զուգահեռներ անցկացնելով XX դարասկզբում տեղի ունեցած գործընթացների հետ: 1910-1920-ական թվականներին կովկասյան թաթարների մոտ ազգային ինքնության գիտակցման հարցում մատնանշվում է հատկապես հայ-թաթարական բախումների առանցքային դերը (էջ 21): Ըստ իսլամականության կամ թյուրքականության հիմքերի՝ էթնիկ համախմբման գլխավոր գործոն է դիտարկվում հակահայկականությունը, որը կրկին գլուխ է բարձրացնում ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին՝ դառնալով ադրբեջանական ինքնության հատվածայնացումը կանխող և պետության ամբողջականությունը կանխորոշող գլխավոր ուղենիշ:

Վերլուծելով քննարկվող տարիներին Ադրբեջանում տեղի ունեցող իրա-

դարձությունները՝ Տ. Հայրապետյանը համոզիչ կերպով բացահայտում է Ադրբեջանի քաղաքական կյանքում հակահայկականության և հակակոմունիստական տարրերի աստիճանական ձևավորման, զուգորդման և դրանց միջոցով քաղաքական խնդիրների լուծման ամբողջ գործընթացը: Հակահայկականությունը առավելապես օգտագործվում էր հասարակությանը մոտիվացնելու, ընդդեմ իշխող ուժի համախմբելու նպատակներով: Հեղինակը մասնավորապես նշում է, որ «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» (ԱԺՃ) կազմակերպությունը, որը հետագայում հետխորհրդային Ադրբեջանի գլխավոր քաղաքական ուժը դարձավ, կոմունիստների դեմ պայքարում օգտագործում էր ղարաբայան գործոնը (ավելի լայն ընդգրկմամբ՝ հակահայկականությունը), օրինակ՝ Հայաստանում և Արցախում տեղի ունեցող իրադարձությունների ձեռնածու խաղարկումների միջոցով, որի թաքնված թիրախը, սակայն, իշխանությունը գրավելն էր (էջ 60-61):

Գրքի երկրորդ գլխում Տ. Հայրապետյանը վերլուծում է ներքաղաքական զարգացումները Ադրբեջանի առաջին նախագահների՝ Այազ Մութալիբովի և Աբուլֆազ Էլչիբեյի իշխանության տարիներին: Նա բացահայտում է Մութալիբովի՝ կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարի պաշտոնից 1990 թ. մայիսին Ադրբեջանի նախագահ ընտրվելու, ինչպես նաև Էլչիբեյի՝ 1992 թ. իշխանության գալու և 1993 թ. այն կորցնելու ներքաղաքական զարգացումների տրամաբանությունը: Ինչպես իրավացիորեն եզրակացնում է հեղինակը, հասարակության բավական լայն աջակցությունը վայելող ԱԺՃ-ի համար Մութալիբովի իշխանության գալը, այնուամենայնիվ, հեռահար նպատակների առումով լավագույն տարբերակն էր (էջ 67): Կոմունիստական կուսակցության ազդեցությունը աստիճանաբար թուլանում էր երկրում, իսկ ԽՍՀՄ-ը արդեն փլուզման եզրին էր: Կարելի էր հեշտությամբ կանխատեսել, որ կարճ ժամանակում Մութալիբովը կորցնելու էր թե՛ ներքին քաղաքական հենարանը և թե՛ արտաքին՝ Մոսկվայի աջակցությունը, ինչը իշխանության գալու պարարտ հող էր նախապատրաստում ԱԺՃ-ի համար: Հետագա իրադարձությունները հաստատում են այդ կանխատեսումը:

Ադրբեջանի ներքաղաքական իրադարձությունների վրա արցախյան պատերազմի ազդեցության վերլուծությունը շահեկանորեն ընդգծում է աշխատանքի արժեքը: Ընդ որում, խրախուսելի է, որ Տ. Հայրապետյանը զերծ է մնում հետխորհրդային գիտական հանրույթում, մասնավորապես՝ ռուսական քաղաքագիտական դպրոցում լայնորեն տարածված արտաքին գործոնի կարևորումից: Ներքաղաքական գործընթացները դիտարկելով արտաքին ազդեցությանը զուգահեռ՝ նա նկատում է, որ արցախյան ճակատում հաջողությունները հնարավորություն էին ընձեռում ամրապնդել իշխանությունը, իսկ անհաջողությունների դեպքում ընդդիմության կողմից ներկայացվող իշխանափոխության հայտը իրական հիմքեր էր ստանում (էջ 88): Ավելին. այս տրամաբանությունը գործում էր ինչպես Մութալիբովի նախագահության տարիներին, որի շնորհիվ իշխանության եկավ Էլչիբեյը, այնպես էլ հետագայում, երբ 1993 թ. վերջինիս փոխարինեց Հեյդար Ալիևը:

Գրքի երրորդ գլխում Տ. Հայրապետյանը ուսումնասիրում է Հեյդար Ալիևի իշխանության գալուց մինչև 1998 թ. տեղի ունեցած ներքաղաքական զարգացումները: Վերլուծական հարուստ տվյալներով նա ևս մեկ անգամ հիմնավորում է այն տեսակետը, որ Արցախում պատերազմական գործողությունների դադարեցումը ամրապնդեց Ալիևի իշխանությունն ու զրկեց նրա ընդդիմախոսներին ռազմական անհաջողություններն օգտագործելու միջոցով իշխանափոխության հայտ ներկայացնելու հնարավորությունից: Իսկ 1995 թ. սահմանադրության ընդունմամբ Ալիևը Ադրբեջանում արդեն հաստատեց այն ինքնիշխան կառավարման համակարգը, որի օգնությամբ հետագայում իշխանությունը փոխանցեց իր որդուն:

Եզրակացություններում ամփոփվում են աշխատանքի հիմնական արդյունքները, ընդգծվում են առանցքային մտահանգումները, թեմայի վերաբերյալ հետագա գիտական աշխատանքների իրականացման դաշտ է ձևավորվում: Կարող ենք հավաստել, որ Տ. Հայրապետյանի գիրքը ավարտուն, հիմնավորված ու գիտահետազոտական մեծ հետաքրքրություն ներկայացնող բարձրարժեք աշխատություն է, ոլորտի կարևորագույն հիմնահարցերին նվիրված անաչառ ու անկողմնակալ ուսումնասիրություն:

Այնուամենայնիվ, աշխատանքն ակնհայտորեն կշահեր, եթե հեղինակն առավել համակողմանի ուսումնասիրեր հրադադարի համաձայնության հարցում հայկական կողմերի շարժառիթներն ու դրանց փոխկապվածությունը Ադրբեջանի ներքաղաքական զարգացումների հետ: Հետաքրքիր կլիներ նաև տեսնել 1995 թ. փետրվարին հրադադարի պայմանագրի ամրապնդմանն առնչվող համաձայնագրի ազդեցությունը Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի վրա:

Տ. Հայրապետյանի գիրքն ունի պատմական ու քաղաքագիտական կարևոր նշանակություն, որը կարող է օգտագործվել թեմատիկ դասավանդման ծրագրերում, ինչպես նաև տարբեր ոլորտներում գիտահետազոտական աշխատանքների իրականացման, մասնավորապես՝ ներկայիս քաղաքական գործընթացների վերլուծության և կանխատեսումների համար: Այն կարող է օգտակար լինել նաև ՀՀ պատկան մարմիններին՝ արտաքին քաղաքականության հայեցակարգի մշակման և իրականացման փուլերում:

Գիրքը, որի խմբագիրներն են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արսեն Ավագյանը և պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդուարդ Զոհրաբյանը, գրված է մատչելի լեզվով, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ այն կարող է հետաքրքրություն ներկայացնել հասարակության լայն շրջանակների համար: Այս ամենը վկայում է հեղինակի գիտական կարողությունների, բարդ խնդիրները քննարկելու և լուծումներ գտնելու, ինչպես նաև բազմակողմանի վերլուծություն իրականացնելու ունակության մասին:

ՌՈԲԵՐՏ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Ներկայացվել է 27.08.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019